ՀՏԴ 574.2; 902

ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆ
Մ.Ա.Ավագյան,
Ա.Ա.Խուդոյան

ԲՆԱԿԱՆ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ՈՒՇԲՐՈՆԶԵԴԱՐՅԱՆ ԴԱՄԲԱՐԱՆՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԻ ՎՐԱ

Ցույց է տրվում ուշբրոնզեդարյան մարդու անմիջական, ներդաշնակ ու սերտ կապը բնության հետ և մարդ-բնություն կապի անխզելիությունն ու պահպանումը մահվանից հետո, որն ապահովվում էր դամբարանային թաղումների միջոցով: Դամբարանների կառուցվածքային առանձին տարրերի վերլուծության ժամանակ պատմաբանական տվյալների, բանահյուսության, հնագիտական պեղումների ու հնէաբանական նյութի զուգահեռ դիտարկումը հնարավորություն է տվել հասկանալու ուշբրոնզեդարյան մարդու մտածելակերպը, աշխարհի ու տիեզերքի մասին յուրովի պատկերացումները, ինչպես նաև բնության մի մասնիկը լինելու ենթագիտակցական ձգտումը և բնության հետ ներդաշնակ ապրելու ներքին մղումը:

Առանցքային բառեր. *դամբարան, բնական միջավայր, հայկական մշակույթ, Կենաց Ծառ, կրոմլեխ, այնկողմնային աշխարհ*

Ուշբրոնզեդարյան (մ.թ.ա. XVI դարի վերջ-XIII դարի առաջին կես) հայկական դամբարաններն իրենց կառուցվածքային տարրերով աշխարհի այլ դամբարաններից տարբերվում են որոշակի առանձնահատկություններով, որոնք ավելի հետաքրքիր են դարձնում դրանց ուսումնասիրությունը: Առանձնահատկությունները պայմանավորված են տեղաբնիկ ժողովրդի էթնոմշակույթի ձևավորման ու զարգացման յուրահատկություններով: Առանձնապես հատկանշական է տիեզերքի ու աշխարհի կառուցվածքի նրանց պատկերացումները, աշխարհընկալման բնապաշտական սկզբունքները, հասարակական փոխհարաբերությունները, մարդ-բնություն կապի առկայությունը և դրա գեղագիտական ու գեղարվեստական արտացոլումը նյութական գտածոների վրա հայտնաբերած զարդերում ու պատկերներում: Բնապաշտական մոտեցումները և առանձին կենդանիների ու բույսերի պաշտամունքը ձևավորվել են տվյալ տարածքի բնակլիմայական պայմանների և բնական միջավայրի, լանդշաֆտի ազդեցությամբ: Տվյալ ժամանակաշրջանում մարդը շատ մոտ էր կանգնած բնությանը, ապրում էր բնությանը և բնության օրենքներին համահունչ, բնական միջավայրը ոչ թե հարմարեցնում էր կամ փորձում էր հարմարեցնել իր կարիքներին, այլ հարմարվում էր բնությանը և բնական միջավայրին՝ օգտագործելով բնական միջավայրը, տեղանքի ռելիեֆային առանձնահատկությունները և բնական պաշարները նվազագույն չափով, այսինքն՝ այնքան, որքան որ պետք էր բնական կարիքներն ու պահանջները բավարարելու համար: Տվյալ ժամանակաշրջանում մարդ-բնություն կապն այս տեսանկյունից կարելի է բնութագրել որպես բնության, բնական պայմանների, լանդշաֆտի՝ մի կողմից, և մյուս կողմից՝ մարդու ապրելու,

պայմանականորեն փոփոխված ստեղծագործական միջավայրի ներդաշնակ փոխհարաբերություն: Բնության և բնության երևույթների պաշտամունքն արտահայտվում էր կենցաղում, ծիսակատարություններում և մշակույթում, այդ թվում նաև ճարտարապետական ու շինարարական հուշարձաններում, կոթողներում, կառույցներում: Այս առումով բացառություն նաև չեն դամբարանները:

Հնագիտական պեղումներով ապացուցված է, որ դամբարանը համարվում էր տիեզերքի մանրակերտը և միտված էր ապահովելու ննջեցյալի անմահությունը [1]: Դամբարանների կառուցվածքային առանձնահատկությունների մեր ուսումնասիրությունները թույլ են տալիս եզրակացնել, որ դամբարանները կառուցել են դրանք հնարավորինս նմանեցնելով բնությանը և մարդու ապրելու միջավայրին: Այստեղ ամեն ինչ արված է, որպեսզի ննջեցյալը վերածնվելով, հայտնվեր հարազատ և սովորական միջավայրում, այսինքն՝ դա տունն է և բնությունը՝ այն բնական միջավայրը, որտեղ մարդն ապրում է իր կյանքի ամբողջ ընթացքում (մինչև մահանալը):

Կարծում ենք, որ անմահության գաղափարը նույնպես վերցված է բնությունից, այսինքն՝ տվյալ ժամանակաշրջանի մարդկանց պատկերացումների համաձայն՝ բնությունը հավերժական է, անընդհատ վերածնվում է, և քանի որ մարդը բնության մի մասնիկն է, չի կարող տարբերվել բնությունից: Տիեզերքն ու աշխարհն անփոփոխ էին ու հարատև, այդ իսկ պատճառով մարդը մահանալուց հետո չէր կարող պարզապես ոչնչանալ՝ իր ամբողջ ներաշխարհով հանդերձ, մարդը չէր կարող առանձնանալ բնությունից, նա պետք է վերածնվեր, ինչպես բնությունը, ու շարունակեր իր կյանքի ուղին՝ թեկուզև այնկողմնային աշխարհում:

Հայաստանի տարածքի բրոնզեդարյան դամբարանները մարդկանց ընկալումներում համադրվել են տարբեր հասկացությունների հետ, ինչը, ըստ մեր ենթադրության, կապված է տվյալ տարածքում բնակվող ժողովրդի մշակույթի ձևավորման առանձնահատկությունների հետ: Համադրություններից մեկը տունն է: Մյուս հասկացությունը, որի հետ համադրվել է դամբարանը, դա տաճարն է: Ըստ հետազոտողների՝ ժողովրդի հավաքական հիշողության մեջ պահպանվել է կառույցների աստիճանական զարգացման բնականոն ընթացքը՝ զոհասեղանից մինչև տաճար [2]:

Որոշ հետազոտողներ գտնում են, որ դամբարանները կառուցված են բնակելի տների ճարտարապետական մանրամասներով [3]: Սա ևս փաստում է այն մասին, որ դամբարանները կառուցելիս փորձել են ննջեցյալի համար ապահովել առօրյա սովորական բնական միջավայրը, իսկ մյուս կողմից ձգտել են, որպեսզի կառույցը (դամբարանը) հնարավորինս ներդաշնակ լինի բնության հետ և միաձուլվի տեղանքին: Կառույցների աստիճանական զարգացումը զոհասեղանից մինչև տաճար վկայում է այն մասին, որ այդ ժամանակաշրջանում տվյալ տարածքում միևնույն ժողովրդի գոյությունը կրել է անընդհատական բնույթ:

Այստեղ մենք տեսնում ենք հետզհետե դամբարանի սրբացումից մինչև դամբարանը սրբատեղի վերածվելու ուղին: Սա արտահայտում է հանգուցյալի (ննջեցյալ նախնիների)

հանդեպ տածած մեծագույն հարգանքը, որի արդյունքում խստագույնս պահպանվում է հուղարկավորման արարողակարգի ծեսերի հերթականությունը, թաղման վայրերը սրբացվում են և վերածվում են սրբատեղիների: Այս սովորույթը հայ ժողովրդի մոտ պահպանվել է մինչ այսօր և իր արտահայտումն է գտել նաև վաղքրիստոնեական ժամանակաշրջանում, հետագայում՝ միջնադարում: Սրա վառ ապացույցն են քրիստոնեական եկեղեցիների մոտակայքի գերեզմանոցները և եկեղեցիների տարածքում թաղված հայ թագավորներն ու իշխանները [4]: Այսինքն՝ բրոնզեդարյան շրջանում ձևավորված սովորույթը, սերնդե-սերունդ անընդհատ փոխանցվելով և անցնելով որոշակի զարգացման փուլեր, տեղաբնիկ ժողովրդի մոտ պահպանվել է մինչ այսօր:

Դամբարանը համադրվել է նաև արգանդի հետ, քանի որ և՛ հողը, և՛ արգանդն ունեն ծնելու հատկություն: Հայերը թաղումը համարել են վերադարձ «մայր երկրի արգանդ» [5]: Հնարավոր է, որ հենց այս պատկերացումներով է պայմանավորված հանգուցյալի դիրքը դամբարանում (նման դիրքով է լինում պտուղը արգանդում), որը սխեմատիկ ձևով ցույց է տրված նկարում:



Նկ. Ուշբրոնզեդարյան դամբարանների սխեմատիկ կառուցվածքը.
1-կրոմլեխով եզրագծված դամբարանի տեսքը երկրի մակերեսին, 2-հանգուցյալի դիրքը դամբարանում, 3-կտրվածք՝դամբարանի պատի շարվածքի սխեմատիկ պատկեր

Հողում սերմը ծիլ է տալիս, ծլարձակում է և ուղղվում դեպի լույս աշխարհ, դեպի Արևը: Արգանդում պտուղը ձևավորվում է և ծնվում, գալիս է լույս աշխարհ: Հների կողմից, հավանաբար, բնության տարբեր գործընթացների համարժեք երևույթների նման համեմատություն է արվել, այսեղ ցույց է տրված մարդու կապը բնության հետ, շեշտված է այդ կապի ներդաշնակությունը, որի փիլիսոփայությամբ կատարվել է թաղման ծիսակարգը: Այսինքն՝ կարելի է ենթադրել, որ ննջեցյալը պետք է ծլեր հողից կամ ծնվեր արգանդից և երկու դեպքում էլ, մութ աշխարհից պետք է գար լույս աշխարհ: Պետք է ենթադրել, որ Մութ աշխարհից դեպի Լույս աշխարհ անցման ուղի է ծառայել դամբանասրահի մուտքը նախամուտքի (դրոմոս) հետ միասին:

Դամբարանը համադրվել է նաև նավի հետ, քանի որ ենթադրվում էր, որ այնկողմնային աշխարհը ջրով բաժանված էր ողջերի աշխարհից [6]: Պատահական չէ, որ հին հայերենում տապան բառը օգտագործվել է երկու նշանակությամբ՝ նավ և գերեզման (դամբան) [7]: Կայմի

փոխարինումը Կենաց ծառով ամբողջացնում է ընդերքից երկինք հանգուցյալի անցման ուղին: Այստեղ նույնպես ընդգծված է մարդու և մարդաստեղծ աշխարհի ներդաշնակությունը բնության հետ: Կենաց ծառն իրենից ներկայացնում է տվյալ տարածքի տեղաբնիկ ժողովրդի յուրովի պատկերացումը տիեզերքի և աշխարհի կառուցվածքի մասին: Այն ընդերք-երկիր-երկինք համակարգի գաղափարային յուրօրինակ մեկնաբանությունն է: Կենաց ծառի փիլիսոփայական ու գաղափարային համակարգն ամենացայտուն ձևով է արտահայտում տեղաբնիկների բնապաշտությունը:

Այս աշխատանքում չենք անդրադառնում այն համադրություններին, որոնք չեն վերաբերվում հայկական մշակույթին: Հին Հայաստանում թաղման կառույցի կայուն և տարածված ձևերից է կրոմլեխով շրջափակված, դամբանաթմբով ծածկված ստորգետնյա կիսագետնափոր կամ վերգետնյա քարարկղային սալածածկ դամբանասրահը նախամուտքով:

Ըստ հետազոտողների դամբանաբլրային թաղումները բնորոշ են հնդեվրոպական մշակույթներին [8]: Դամբարանաթմբերը բնորոշ են կուր-արաքսյան մշակույթի թաղման ծեսին: Հայկական մշակույթում դամբանաբլրային թաղումները լայնորեն տարածվել և գերիշխող դիրք են գրավել արդեն միջինբրոնզեդարյան ժամանակաշրջանում [9]:

Հայկական մշակույթում դամբարանաթումբը, կարծում ենք, նույնացվել է բլրի հետ: Դա արված է բնության հետ ներդաշնակ լինելու և լանդշաֆտին ձուլվելու նպատակով: Տվյալ տարածքի ժողովուրդը, հազարամյակներ շարունակ բնակվելով նույն լեռնային տեղանքում, բնական է, որ լեռան (բլրի) գաղափարը պիտի ընդգրկեր մշակույթում, այդ թվում՝ ծիսակարգերում: Կարելի է ենթադրել, որ թաղման ծիսակարգում ընդգրկված է սրբազան լեռան գաղափարը, որը նույնացվում է դամբանաբլրի հետ:

Ուշբրոնզեդարյան դամբանաբլուրները օղակվել են քարե ծիսական մեկ կամ ավելի շրջաններով՝ կրոմլեխներով, որոնք հատակագծում շրջանաձև են կամ ձվածիր: Հայկական մշակույթում ուղիղ կրոմլեխներ չեն հանդիպում, Հայաստանի տարածքում ունենք բազմանկյուն կրոմլեխի եզակի օրինակ [10]: Դամբարանի շուրջը կլոր փակ շրջանով հնադարյան մարդիկ, միգուցե, եզրագծում էին այս և այն աշխարհների սահմանը: Հին հայերը հավատում էին, որ տարածքը փակ կլոր շրջանով եզրագծելն այդ տարածքը պաշտպանում էր չար ուժերից, այն դարձնում էր անձեռնմխելի [5]:

Հայերը կրոմլեխի առկայությամբ դամբարանի տարածքը դարձրել են անձեռնմխելի, և հուղարկավորված հանգուցյալին պատնեշել են չար ուժերից, քանի որ վերածնվելու համար հանգուցյալի անդորրը չպետք է խաթարվեր: Հնարավոր է նաև, որ կրոմլեխը, պաշտպանիչ դերակատարում ունենալուց բացի, խորհրդանշում էր տիեզերքը, կրոմլեխի կենտրոնական մասում դամբարանասրահն էր, որը հնարավոր է, նույնացվել է Երկրի հետ, որի մեջ ամփոփված է ննջեցյալը կամ սերմը [11]: Սա համապատասխանում է այդ ժամանակաշրջանում տեղաբնիկների՝ աշխարհի եռամասնական կառուցվածքի պատկերացումներին: Դամբարանների կառուցման այսպիսի մոտեցումը դամբարանը դարձնում է բնության մի

մասնիկը, իսկ հանգուցյալը վերադարձվում է Մայր Երկրի արգանդ՝ Լույս աշխարհ գալու ակնկալիքով:

Ուշբրոնզեդարյան շրջանում դամբանաբլրի կենտրոնական մասում կանգնեցվել է հուշակոթող [12]: Տեղաբնիկների պատկերացումներով հուշակոթողը խորհրդանշում էր Կենաց Ծառը: Մեր կարծիքով՝ այդ ժամանակվա պատկերացումների համաձայն Կենաց Ծառը, սկիզբ առնելով Ընդերքից և հասնելով սկզբում Երկիր, հետո Երկինք, հավանաբար նպաստում էր հանգուցյալի վերածննդին և ընդերք-երկիր-երկինք սահուն անցմանը, այսինքն՝ վերածնված հանգուցյալին փոխադրում էր այնկողմնային աշխարհ: Այստեղ նույնպես տեսնում ենք բնության պաշտամունքը: Ծառը, աճելով Երկրի վրա, իր արմատներով խորանում է դեպի Ընդերք՝ միաժամանակ անընդհատ ուղղվելով դեպի վեր, ձգտելով դեպի Երկինք: Միգուցե այս հանգամանքից ելնելով՝ հին հայերը կյանքի անընդհատականության և տիեզերքի մասին իրենց պատկերացումները մարմնավորել են հավերժական ու մշտադալար ծառի խորհրդանիշով՝ Կենաց Ծառով:

Այսպիսով, դամբարանային թաղումների և դամբարանների կառուցվածքային առանձնահատկությունների ուսումնասիրությունները փաստում են, որ ուշ բրոնզի դարում բնության հետ ներդաշնակ ու համահունչ ապրելու ձգտումը, բնության երևույթների պաշտամունքը մարդու կենցաղի ու կյանքի անբաժանելի մաս են հանդիսացել: Դամբարանները պետք է ապահովեին մահացածների վերածնունդն ու անմահությունը, այսինքն՝ մարդ-բնություն կապի ներդաշնակությունն ու անընդհատականությունը մահվանից հետո, և դրանք կառուցվել են տվյալ ժամանակաշրջանի մարդկանց տիեզերքի պատկերացումների համաձայն՝ տիեզերքի տարրերի խորհրդանշանային համակարգի նմանությամբ:

Մ.Ա.Ավագյան,
Ա.Ա.Խուդոյան

ВЛИЯНИЕ ЕСТЕСТВЕННОЙ СРЕДЫ НА СТРУКТУРУ ПОЗДНЕБРОНЗОВЫХ ГРОБНИЦ

Показана гармоничная связь позднебронзового человека с природой, неразрывность и сохранение связи человека с природой после смерти, которая обеспечивалась посредством погребальных захоронений. При анализе отдельных структурных деталей гробниц параллельно рассмотрены исторические данные, фольклор, археологические раскопки и материалы, что дает возможность понять мышление, своеобразные представления о земле и вселенной, а так же подсознательное стремление и внутренное побуждение позднебронзового человека быть частицой природы и жить в гармонии с природой.

Ключевые слова: *гробница, естественная среда, армянская культура, Древо жизни, кромлех, потусторонний мир*

M.A.Avagyan,
A.A.Khudoyan

INFLUENCE OF NATURAL ENVIRONMENT ON THE STRUCTURE OF THE LATE BRONZE AGE TOMBS

A direct, closest and harmonious connection of human and nature, the continuity and preservation of after death connection of the Late Bronze age man with nature, which is provided by using of entombed

burials is shown. In the analysis of the individual structural parts tombs were parallel examined by historical data, folklore, archaeological excavations and materials, which made it possible to understand the way of thinking, the peculiar performance about the earth and the universe of Late Bronze age man, and as well a subconscious aspiration of being the part of nature and internally prompting to live in harmony with the nature.

***Keywords**: tomb, natural environment, the Armenian culture, the Tree of Life, the cromlech, the hereafter world*

Գրականություն

1. **Савостина Е.А.** Сакральное пространство и погребальный обряд боспорских гробниц // Исследования в области балто-славянской духовной культуры. Погребальный обряд. - М., 1990. - 241 с.
2. История древнего мира, т. I. - М., 1989. - 113 с.
3. **Мартиросян А.А.** Раскопки в Головино. - Ереван, 1954. - 46 с.
4. **Լալայան Ե.** Հուղարկավորության և գերեզմանների զարգացումը Հայաստանում // Տեղեկագիր ՀՍԽՀ գիտության և արվեստի ինստիտուտի. -1928. -№3. - էջ 96:
5. **Լիսիցյան Ստ.** Զանգեզուրի հայերը. - Երևան, 1969. - էջ 209:
6. **Чайлд Г.** У истоков европейской цивилизации. - М., 1952. - 349 с.
7. **Ամառյան Հ.** Հայերեն արմատական բառարան, հ. Դ. - Երևան, 1979. - էջ 373:
8. **Gimbutas M.** Proto-Indo-European Culture: the Kurgan Culture during the Fifth, Fourth and Third Millennia B.C. – Indo-European and Indo-Europeans. - Philadelphia, 1970. - P. 155, 156, 190.
9. **Симонян А.Е.** Культура эпохи средней бронзы северных районов Армянского нагорья: Автореф. дисс. ... канд. арх.наук. - Л., 1984. – С. 9.
10. **Арешян Г.Е.** Маисянские курганы // Археологические открытия 1985 года. - М., 1987. - С. 558-559.
11. **Շահինյան Ս.Մ.** Խաչքար: Տիեզերական արարչագործության սրբազան համակարգ. - Երևան, 2012. - էջ 46-48:
12. **Արեշյան Գ., Ասատրյան Ե.** Հայագիտական կենտրոնի 1979-83 թթ. դաշտային հնագիտական աշխատանքները// Բամբեր Երևանի համալսարանի. - 1985. – N 3. - էջ 203:

***Ավագյան Մարիամ Ավետիսի, կ.գ.թ., դոցենտ** (ՀՀ, ք.Երևան) - ՃՇՀԱՀ, Գեոէկոլոգիայի և կենսանվտանգության ամբիոն, (+374) 93438756, (+374) 99438756, mariam.avagian@gmail.com, **Խուդոյան Անուշ Արամայիսի** (ՀՀ, ք.Երևան) - ՃՇՀԱՀ, Գեոէկոլոգիայի և կենսանվտանգության ամբիոն, մագիստրանտ, (+374) 98471294, khudanush@mail.ru*

***Авагян Мариам Аветисовна. к.б.н., доцент** (РА, г. Ереван) - НУАСА, кафедра Геоэкологии и жизнеобеспечения, (+374) 93438756, (+374) 99438756, mariam.avagian@gmail.com, **Худоян Ануш Арамаисовна** (РА, г.Ереван) - НУАСА, кафедра Геоэкологии и жизнеобеспечения, магистрант, (+374) 98471294, khudanush@mail.ru*

***Avagyan Mariam Avetis, doctor of philosophy (PhD) in Biological Sciences, associate professor** (Yerevan, RA) - NUACA, chair of Geoecology and Biosafety, (+374) 93438756, (+374) 99438756, mariam.avagian@gmail.com, **Khudoyan Anush Aramayis** (Yerevan, RA) - NUACA, chair of Geoecology and Biosafety, master student, (+374) 98471294, khudanush@mail.ru*

Ներկայացվել է՝ 10.11.2016թ.
Ընդունվել է տպագրության՝ 11.01.2017թ.